

Մարիամ Մ. Մարգարյան
Քաղ. գիտ. դոկտոր

Գևորգ Մ. Ղուկասյան

ԷԹՆԻԿ ԼՈՒՐԻՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Որպես ՀՀ քաղաքական զարգացման և արդիականացման
դերակատար*

Բանալի բառեր – քաղաքական արդիականացում, քաղաքական զարգացում, բնականոն արդիականացում, էթնիկ լոբբինգ, սփյուռք, քաղաքական զարգացման ձգնաժամ:

Մուտք

Քաղաքական գիտության մեջ արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և ցանցային փոփոխությունների ու անորոշության պայմաններում վաղուց առաջ է ելել դեռևս 20-րդ դարի 50-ական թթ. մեկնարկած և այժմ էլ շարունակվող քաղաքական զարգացման և արդիականացման՝ լատինա-ամերիկյան, աֆրիկյան և հետխորհրդային փորձի համակարգման անհրաժեշտությունը: Որովհետև քաղաքական գործընթացում էթնոնշակության առանձնահատկությունների անտեսման պատճառով գրեթե բոլոր երկրները կանգնել են քաղաքական զարգացման ձգնաժամերի առաջ: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ քաղաքական արդիականացման գործընթացում չի կարևորվել քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման հիմք:

«Արդիականացում» հասկացությունը ներառում է նաև անցումը ավանդական տիպի պետությունից արդիական պետության՝ ապահովելու համար քաղաքական համակարգի հաստատությունների ժողովրդավարական կառավարման որակական զարգացումը¹: Քաղաքական արդիականացման գլխավոր նախադրյալներն են իր խորհրդանիշներով ու արժեքներով ձկուն քաղաքական համակարգի և արդյունավետ վարչական մեքե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.08.2021:

1 Տե՛ս Kaarbo Juliet, Ray Lee James, Global politics, 9th edition. New York, 2008, էջ 386:

նայի ստեղծումն ու քաղաքական գործընթացի կանխատեսելի ընթացքը: Պատմականորեն արդիականացումը ենթադրում է քաղաքական կառուցվածքի և մշակույթի փոփոխություններ, որոնք՝ որպես հասարակության համընդհանուր կերպափոխություն, ընդգրկում են աշխարհիկացման (սեկուլյարիզացիայի), ինդուստրացման, սոցիալական շարժունակության, կենսամակարդակի աճի, գրագիտության, կրթության և ԶԼՄ-ների տարածման, ազգային համախմբվածության, բնակչության քաղաքական մասնակցության ընդլայնման երևույթները:

1950-ական թվականներին գաղութատիրության լուծը թոթափած երկրներին բազմաչափ փոփոխությունների կառավարման համար, ըստ սույն մոտեցման, առաջարկվեց արագացված տեմպերով ազատականացման միջոցով արդիականացման մի գծային մոդել, որում ԱՄՆ-ն ու Արևմտյան Եվրոպան ներկայանում էին որպես բնականոն եղանակով նորարարացող երկրներ: Այսպիսով՝ իր կայացման վաղ շրջանում արդիականացման տեսությունը ոչ այնքան բազմաչափ փոփոխությունների կանխատեսման ու մեկնաբանման, այսպես կոչված, «մաքուր» գիտական տեսություն էր, որքան զարգացած Արևմուտքի գաղափարական, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական նկրտումները խաղային տրամաբանությամբ ներկայացնող ռազմավարական նախագիծ: Ավելին՝ հետահայաց վերլուծությունը հնարավորություն է տալիս արդիականացումը դիտարկելու որպես Սառը պատերազմի ժամանակ նորանկախ երկրների քաղաքական համակարգն ապակայունացրած խաղային գործողությունների կառուցվածքային-գործառնական համալիր²:

Համադրելով Լատինական Ամերիկայում, Հարավային Եվրոպայում և Աֆրիկայում քաղաքական գործընթացների արդյունքները՝ արդեն 1970-1980-ական թթ. քաղաքական արդիականացման տեսաբանները եզրակացրին, որ արդիականացումը պայմանավորված է սոցիալ-մշակութային գործոններով (մարդաբանական տիպ, ազգային ինքնություն, համընդհանուր նորմերի ընդունման աստիճան, քաղաքական զարգացման նպատակ): Փաստորեն, արդիականացումը կարող էր տեղի ունենալ միայն սոցիալական շերտերի արժեքային կողմնորոշումների փոփոխության և հասարակության քաղաքական մշակույթի շարունակական զարգացման պայմաններում: Մինչդեռ նշված նպատակների համար իրականացված փոփոխությունները որպես վեկտորային՝ անընդհատ վերընթաց ու անշրջելի ազատականացման գործընթաց դիտարկելու հետևանքով դուրս մղվեցին արդիականացման քաղաքակրթական ասպեկտի և սոցիալական արժեքի հարցերը: Արդեն 1970-ական թթ. կեսերից բացահայտվեցին արդիակա-

2 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2017, N 4 (94), էջ 21-33:

նացման վեկտորային մոդելի թերությունները: Արդիականացման հիմնադրույթները կոշտ քննադատության ենթարկվեցին, հատկապես՝ ավանդույթ-արդիություն երկձյուղման համատեքստում³:

Հետխորհրդային տարածքում ժողովրդավարության անցման արդյունքներն ակնհայտորեն վկայում են, որ վեկտորայնությունը (գծային ազատականացում) հանգեցրել է քաղաքական զարգացման ձգնաժամերի⁴: Որպես արդյունք՝ հետխորհրդային երկրներում քաղաքացիների ակնկալիքները չեն արդարացել, այսինքն՝ տեղի է ունեցել «պատումների հիասթափություն», ինչն էլ դրդել է քաղաքացիներին օտարվելու սեփական պետությունից և համալրելու կամ ձևավորելու տարբեր երկրներում սեփական էթնիկ համայնքները: Բայց սփյուռքների քաղաքական դերակատարության շարունակական աճի պարագայում սեփական պետությունից օտարված քաղաքացիները հնարավորություն ունեն բազմամշակութայնության ներկա դարաշրջանում վերագտնելու սեփական ինքնությունն ու պաշտպանելու այն: Հայրենի պետության քաղաքական արդիականացման գործում այդպիսի գործունեության ազդեցությանը կանդրադառնանք սույն աշխատանքի համապատասխան հատվածում:

Փաստորեն, քաղաքական արդիականացումը մի մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է արժեքների ու շահերի իր համակարգի, քաղաքական գիտակցությանը համապատասխանող ընտրությունների և քաղաքական ու քաղաքացիական հաստատությունների կայացմամբ: Այս նկատառումներով էլ զարգացած և զարգացող պետությունների բազմաչափ փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունների հետ նոր մարտահրավերների հաշվառմամբ վերանայվել է արդիականացման տեսությունը: Հենց այս պատճառով էլ նպատակահարմար է քաղաքական արդիականացումը դիտել որպես տնտեսական առաջընթացի նախապայման, անցումային հասարակություններին բնորոշ քաղաքականություն, ժողովրդավարական համախմբումը խթանող զարգացման մոդել, փոփոխությունների ամբողջություն, ազգ-պետության ցանցային գործունեության կազմակերպման ձև, զանգվածային շարժումություն և մասնակցություն⁵:

Միննույն ժամանակ համեմատական քաղաքագիտության կառուցվածքում քաղաքական զարգացման ձգնաժամերի առանձնահատկությունների բացահայտումն ու կառավարումը հնարավորություն կտա զուգամիտելու (կոնվերգենսացնելու) ազգային և ունիվերսալ արժեքային համա-

3 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Եր., «Պետական ծառայություն», 2004, էջ 7:

4 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Ժողովրդավարացման երրորդ փուլը. անցումային հասարակությունների գծային զարգացման բնույթը, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2005, N 2, էջ 126-140:

5 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, «Հայկական բանակ», 2017, N 4 (94), էջ 21-33:

կարգերը, նպատակադրված տեղ ու դեր գրավելու գլոբալ կառավարման համակարգում՝ բնականոն ճանապարհով արդիականացնելով քաղաքական, քաղաքացիական և ազգային ինքնությունը⁶:

Սույն աշխատանքի նպատակն է գիտավերլուծական հարացույցի շրջանակներում վերլուծել քաղաքական արդիականացման ու զարգացման հայաստանյան դրսևորումները և բացահայտել հայկական սփյուռքի էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերակատարության հնարավորությունը խնդրո առարկա գործընթացներում: Դրա գիտականությունը պայմանավորված է քաղաքագիտության կառուցվածքում այնպիսի երևույթների կարևորմամբ, ինչպիսիք են գլոբալ տուրբուլենտությունը, ցանցային անորոշությունը, քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացներում խաղային մանիպուլյատիվ տեխնոլոգիաների զարգացումը կամ ոչ ֆորմալ կիրառումը: Ակնհայտ է, որ, առանց քաղաքակրթական և ազգային առանձնահատկությունների հաշվառման, քաղաքական զարգացման ճգնաժամերը պարբերաբար կրկնվելու հնարավորություններ ունեն, և դրանց անտեսումը նպաստում է «չհաջողված» և «փխրուն» պետության առաջացմանը:

Պայմանավորված քաղաքական զարգացման ճգնաժամերով, ինչպես նաև «չհաջողված» կամ «փխրուն» պետությունների առկայությամբ և աշխարհաքաղաքացի լինելու ու երջանիկ ապրելու ձգտումով՝ ամբողջ աշխարհում նկատվում է էթնիկ համայնքներում ապրող մարդկանց թվի կտրուկ աճ: Միգրացիոն դժվար կառավարելի տենդենցներն ազդում են նաև սփյուռքների քաղաքական բազմաշերտ դերակատարության վրա և պարտադրում նոր զարգացումների դիտանկյունից անդրադառնալ դրանց: Այսպես, եթե 1960-ական թթ. աշխարհում կար մոտ 75.5 միլիոն մարդ, որ ապրում էր սեփական հայրենիքից դուրս, ապա 2000 թ.՝ 176.6 միլիոն, 2009 թ.՝ 213.9 միլիոն⁷, իսկ 2019 թ.՝ 272 միլիոն⁸:

Որպես կանոն, սփյուռքների քաղաքական դերակատարության հիմնական կազմակերպված արտահայտչաձևեր **էթնիկ լոբբինգի** ինստիտուտն է⁹: Հետևաբար, ի դեմս սփյուռքի և դրա քաղաքական դերակատարությունն ապահովող հիմնական ինստիտուտի, գործ ունենք ազգային-պետական ռեսուրսի հետ, որը կարող է հայրենի պետության քաղաքական արդիականացման գործում կարևոր դերակատարություն ունենալ:

6 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2019, էջ 31-32:

7 Տե՛ս Trends in total migrant stock: The 2009 revision, <http://esa.un.org/migration> (մուտք՝ 21.08.2021):

8 Տե՛ս The number of international migrants reaches 272 million, continuing an upward trend in all world regions, says UN, <https://www.un.org/development/desa/en/news/population/international-migrant-stock-2019.html> (մուտք՝ 20.08.2021):

9 Տե՛ս **Ղուկասյան Չ.**, Արևմտյան Եվրոպայի հայկական սփյուռքի լոբբիստական գործունեության շուրջ, «Պատմություն և մշակույթ», Եր., 2020, N 1, էջ 242:

1. Քաղաքական զարգացման և արդիականացման հիմնախնդիրները. տեսամեթոդաբանական վերլուծություն

Քաղաքական գործընթացը՝ որպես քաղաքական գիտության հետազոտման կարևորագույն կատեգորիա, ունի բազմաթիվ դերակատարներ, քաղաքական միջերևույթներ և սինվոլներ: Այն քաղաքականության տեղակայումն է ժամանակի և տարածության մեջ իբրև քաղաքական դերակատարների ռազմավարական և իրավիճակային գործողությունների ու փոխազդեցությունների հաջորդականություն, ինչը կապված է որոշակի տրամաբանության կամ իմաստի հետ: Քաղաքական գործընթացի ձևային դրսևորումներն են քաղաքական փոփոխությունը և քաղաքական զարգացումը: Առաջինը դրսևորվում է գլխավորապես քաղաքական նոր դերակատարների, քաղաքական համակարգի և արտաքին միջավայրի փոխգործակցությամբ: Քաղաքական զարգացումը քաղաքական որակական փոփոխությունների կուտակման գործընթաց է, որոնք կարող են վերաբերել քաղաքական գործընթացի փուլերին, ինստիտուտներին կամ նույնիսկ համակարգերին: Քաղաքական զարգացմանը բնորոշ է ընդհանուր համակարգի և դրա առանձին բաղադրիչների որակական հաջորդական (բնականոն) կառավարելի փոփոխությունը:

Քաղաքական գիտության մեջ քաղաքական զարգացման վրա ազդող հիմնական գործոնների և դրանց շարժիչ ուժերի վերաբերյալ միասնական տեսակետ, որպես այդպիսին, գոյություն չունի, իսկ առաջարկվող թեզերը շոշափում են քաղաքական համակարգի կառուցվածքագործառնական գրեթե բոլոր շերտերը: Սույն աշխատանքի շրջանակներում մեզ համար հատկապես հետաքրքրություն է ներկայացնում Կ. Դոյչի՝ դեռևս 1960-ական թթ. առաջ քաշած այն տեսակետը, որ քաղաքական զարգացման հիմնական գործոնը բնակչության մոբիլիզացումն է՝ քաղաքացիների ներգրավումը քաղաքական գործընթացներում որպես ակտիվ դերակատարներ տնտեսական նորարարություններում, սոցիալական կառուցվածքի և արժեքների ու մոդելների համակարգի փոփոխություններում¹⁰: Ընդհանրապես արժեհամակարգային և վարքաբանական փոփոխությունները որպես քաղաքական զարգացման գործոն են դիտարկում նաև Ապտերը, Ինկելսը, Ինլգեհարթը և ուրիշներ¹¹:

Քաղաքական զարգացման բնույթին ծավալուն անդրադարձ է կատարել Ֆ. Ֆուկույաման՝ մեծապես կարևորելով արդի քաղաքական զարգացումների տրամաբանության և դինամիկայի ընկալման պատմական

10 Տե՛ս Deutsch K., W., Social Mobilization and political development, The American Political Science Review, Vol. 55, No. 3, Sep., 1961, էջ 493-514:

11 Տե՛ս Мелешкина Е., Политический процесс, М., 2001, էջ 238:

ենթատեքստը: Ֆուկույաման քաղաքական զարգացումը դիտարկում է քաղաքական ինստիտուտների կերպափոխության միջոցով, իսկ քաղաքական ինստիտուտ համարում է պետությունը, օրենքի գերակայությունը և հաշվետվողական կառավարումը:

Ֆուկույաման գտնում է, որ մարդիկ երբեք չեն բնակվել նախասոցիալական պայմաններում: Հեղինակը հակադրվում է նաև Հոբսի ու Ռուսոյի՝ անարխիկ բռնության և խաղաղասեր տգիտության տեսություններին՝ զարգացնելով մարդկային հասարակության զարգացման ազգակցական կոնցեպտը, որը ներառում է երկու մակարդակ՝ ազգակցական ընտրությունը և փոխադարձ ալտրուիզմը: Այսպիսով՝ ազգակցական կապը, որի վրա հենված է սույն աշխատանքում քննարկվող էթնիկ լոբբինգի ինստիտուտը, Ֆուկույաման դիտում է որպես քաղաքական զարգացման կարևոր գործոն¹²:

Հատկանշական են քաղաքական զարգացման գործոնների վերաբերյալ Ֆ. Ֆուկույամայի դիտարկումները: Վերջինս քաղաքական գործընթացներում կարևորում է ինչպես վարքաբանական-արժեհամակարգային գործոններն ու քաղաքական համակարգի ինստիտուտները, այնպես էլ մոբիլիզացիան: Ֆուկույաման քաղաքական զարգացման ուրույն դրսևորում է համարում և առանձին դիտարկում քաղաքական արդիականացումը: Ինստիտուտների առումով Ֆուկույաման նկատում է. «Քանի որ ինստիտուտները, ըստ էության, կանոններ են, որոնք սահմանափակում են անհատի ընտրության ազատությունը, համարժեքորեն կարելի է ասել, որ մարդիկ ունեն հաստատություններ ստեղծելու բնական հակում: Կանոնները կարելի է ռացիոնալ կերպով ստանալ՝ հաշվարկելով, թե ինչպես առավելագույնի հասցնել սեփական շահը, ինչը ստիպում է, որ նրանք սոցիալական պայմանագրեր կնքեն այլ ֆիզիկական անձանց հետ»¹³: Ֆուկույաման ընդգծում է, որ քաղաքական զարգացման պատմության մեջ կատարված խոշոր փոփոխություններից մեկն էլ այն է, որ ազգային ինստիտուտների վրա մեծանում է արտաքին ազդեցությունը¹⁴:

Ֆուկույաման, հենվելով Ս. Հանթինգթոնի «Քաղաքական կարգը փոփոխվող հասարակություններում» գրքի հիմնական գաղափարների վրա, շաղկապում է քաղաքական զարգացումն ու քաղաքական արդիականացումը: Նախ հեղինակը նկատում է, որ քաղաքական զարգացումն ունի իր տրամաբանությունը, որը թեև կապված է զարգացման տնտեսական և սոցիալական հարթությունների տրամաբանությանը, սակայն նաև տարբերվում է դրանցից: Քաղաքական անկումը լինում է այն դեպքերում, երբ

12 Տե՛ս Fukuyama F., The origins of political order, New York, 2011, էջ 438-439:

13 Նույն տեղում, էջ 440:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 476:

տնտեսական և սոցիալական զարգացումն ու արդիականացումը գերազանցում են քաղաքական զարգացմանը: Այս հանգամանքն է, որ անդադար հեղաշրջումների, հեղափոխությունների և ընդհանրապես քաղաքական տուրբուլենտության պատճառ է դառնում՝ սկսած նախորդ դարի 50-60-ական թվականներից: Նաև ելնելով սրանից՝ Ֆուկույաման առաջարկում է քաղաքական զարգացման ուրույն տրամաբանություն, որը հարկ է դիտարկել դասական արդիականացման տեսության խորապատկերին¹⁵:

Քաղաքական տեսաբանների զգալի մասը քաղաքական զարգացում և արդիականացում երևույթները գրեթե նույնական է համարում: Այնուամենայնիվ, քաղաքագիտական այս կատեգորիաները, գործընթացային առումով նույնական լինելով, տարբեր են գործընթացի որոշակիության կամ նպատակայնության առումով: Եթե քաղաքական զարգացումը ենթադրում է որակական փոփոխություն, որի արդյունքը, սակայն, երաշխավորված չէ, ապա արդիականացումը գիտական արդի սահմանումներում ռազմավարական էլիտայի առաջնորդությամբ և սոցիալական տարբեր խմբերի կողմից որդեգրված մի բազմաչափ գործընթաց է, որը ենթադրում է իր խորհրդանիշներով ու արժեքներով ձկուն քաղաքական համակարգի ձևավորում, վարչական մեքենայի արդյունավետ գործարկում, պետականաշինության մշակույթի զարգացում և ազգային անվտանգության համակարգային ապահովում¹⁶: Այս սահմանումը, ըստ էության, տարբերվում է արդիականացման առաջին երկու փուլերի ընկալումներից:

Քաղաքական արդիականացման հիմքում քաղաքական կառավարման համընդհանուր (ունիվերսալ) մոդելի կիրառության հիմնավորման գաղափարն է: Այս մոդելի հաստատման և արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է ավանդական (փակ) հասարակությունից անցում կատարել արդիական (բաց) հասարակության, որը գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալական շարժունակության, արժեքային և նորմատիվ համակարգերի էվոլյուցիայի, վերակառուցման կամ արմատական փոփոխության արդյունք է¹⁷: Ըստ այդմ՝ քաղաքագիտության մեջ մշակվել և ուսումնասիրվում են քաղաքական արդիականացման մի քանի տիպեր:

Առաջինն առանձնացնում է երկու մոդել՝ **ինքնաբուխ (շիթային) արդիականացում**, որը բնորոշվում է ներքին ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական զարգացման միջոցով նոր ժամանակների անցման կամ ժամանակակից տարածությունների ստեղծման դրսևորումներով, և **երկրորդական կամ արտա-**

15 Տե՛ս նույն տեղում, էջ 458:
16 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, էջ 10:
17 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, էջ 6:

ցոված արդիականացում, որը բնորոշվում է ժամանակակից պայմանների (տարածությունների) ստեղծմամբ՝ տեխնոլոգիաների, ներդրումների, մարդկային ռեսուրսների և արտաքին փոխառությունների միջոցով:

Ըստ երկրորդ տիպաբանության՝ առանձնացվում է արդիականացման երեք մոդել՝

- ✓ **ներծին (էնդոգեն)** – սեփական ռեսուրսների միջոցով արդիականացում,
- ✓ **արտածին (էկզոգեն)** – փոխառությունների միջոցով արդիականացում սեփական ռեսուրսների բացակայության կամ մերժման պայմաններում,
- ✓ **ներծին-արտածին** – սեփական ռեսուրսների և փոխառությունների միջոցով արդիականացում¹⁸:

Ըստ քաղաքական գործընթացի արագության՝ առանձնացվում են «**քայլող**» կամ **առաջնային** քաղաքական արդիականացում և «**վազող**» կամ «**հասնող**» քաղաքական արդիականացում¹⁹:

«Քայլող» կամ առաջնային քաղաքական արդիականացումը սկսվեց 16-րդ դարում Եվրոպայում տեղի ունեցած ռեֆորմացիայով և իր ավարտին հասավ 17–18-րդ դարերում՝ Լուսավորության դարաշրջանում: Այս դեպքում կերպավորման բնութագրիչներն են ռացիոնալ ինստիտուտների ստեղծումը, քաղաքական իշխանության աշխարհիկացումը, բարձր սոցիալական շարժունակությունը, իրավունքի գերակայությունը, ժողովրդական կառավարման ձևը և այլն: Այդպիսի հասարակությունը Մ. Վերբերն անվանեց «արդիական»՝ ի հակադրություն ավանդականի, իսկ Կ. Մարքսը՝ կապիտալիստական:

«Վազող» կամ «հասնող» քաղաքական արդիականացումը ձևավորվեց և տարածվեց զարգացող երկրներում ու տարածաշրջաններում (Լատինական Ամերիկա, Ասիա, Աֆրիկա և իհարկե հետխորհրդային երկրներ): Այն պայմանավորված էր քաղաքականապես զարգացած երկրների անընդհատ աճող ազդեցությամբ և ի վերջո հանգեցրեց արևմտյան քաղաքական ինստիտուտների արժեքաբանական խզման: Այս ամենը զարգացող երկրներին ստիպեց արագացնել արդիականացման սեփական գործընթացները: «Վազող» արդիականացում որդեգրած երկրները, օգտվելով այլ երկրների համանման փորձից, տարատեսակ մեթոդներով փորձեցին արագացնել սեփական զարգացումը, ինչի հետևանքով հասարակությունները հանգեցին փակուղային արդիականացման:

18 Տե՛ս История модернизации как предмет социально-философского анализа, отв. ред. В.Г. Федотова, В.А. Колпаков, М., «ИФРАН», 2014, էջ 233:

19 Տե՛ս Մարքսյան Մ., Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, էջ 11:

Արդիականացման տեսաբաններից Շ. Էյզենշտադտը դեպի արդիական հասարակություն անցում է համարում փոփոխության այն գծային գործընթացները, որոնք իրենց հեղափոխականացնող բնույթով հաստատվել են Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում դեռ 17-19-րդ դդ., ապա 19-20-րդ դդ. տարածվել են Հարավային Ամերիկայում, Ասիայում և Աֆրիկայում²⁰:

1950-1960-ական թվականներից, պապագաղութացմամբ պայմանավորված, քաղաքական արդիականացումը բազմակողմանիորեն ուսումնասիրվում է որպես քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների մի այնպիսի ամբողջություն, որը ենթադրում է քաղաքական փոփոխությունների, կայունության, անվտանգության և լեգիտիմության բազմաչափ փոխապայմանավորվածություն:

Ըստ Ս. Հանթինգթոնի՝ «Արդիականացումը ներառում է ինդուստրացումը, ուրբանացումը, գրագիտության, կրթվածության, բարեկեցության և սոցիալական հոգսի մակարդակի աճը, ինչպես նաև ավելի բարդ ու բազմակողմանի մասնագիտական կառուցվածքներ»²¹:

1950-1960 ական թթ. քաղաքական արդիականացման առաջին փուլը բնորոշվեց որպես արժեքային համակարգում ազգայինը պահպանած երկրների հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացում՝ արևմտյան ունիվերսալ արժեքների մեխանիկական տարածման միջոցով: Միաժամանակ այն ընկալվեց որպես ավանդական հասարակությունների արժեհամակարգերի արմատական փոփոխություն: Այս ամենին զուգահեռ ենթադրվում էր, որ քաղաքական արդիականացումը «երրորդ աշխարհի» երկրների արդյունաբերականացումը և քաղաքական զարգացումն ուղղորդող գործընթաց է Եվրոպայի, ԱՄՆ-ի և «երրորդ աշխարհի» միջև²²:

2. Քաղաքական զարգացման ու արդիականացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Արդիականացման տեսաբաններից Շ. Էյզենշտադտը նկատում է, որ արդիականացումը մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է երկարատև զարգացման հետևանքով իր հիմքում

20 Տե՛ս Էյզենշտադտ Ս., *Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций*, Пер. с англ. А.В. Гордона, под ред. Б.С. Ерасова, М., «Аспект Пресс», 1999, էջ 13-14:

21 Хантингтон С., *Столкновение цивилизаций*, пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова, М., 2007, с. 94-95.

22 Տե՛ս Սարգսյան Մ., Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, էջ 13:

ձևավորված սկզբունքների, կառույցների ու խորհրդանիշների համակարգերին համապատասխան: Իսկ Կ. Դոյչը գտնում է, որ արդիականացումը, անխուսափելիորեն ակտիվացնելով էթնիկական գիտակցությունը, նպաստում է ազգային ինքնավարության հասնելու քաղաքական նպատակադրման ձևավորմանը²³:

Այս առումով Հայաստանում քաղաքական արդիականացումը քաղաքականության դերակատարների, նոր արժեքներ կրողների ու արտացոլողների և իշխանության հաստատությունների միջև քաղաքական փոխազդեցությունների մի ընդարձակ ու բարդ խճանկար է: Նրանք գործում են ըստ այն դերերի և գործառույթների, որոնք թելադրում են հայոց մշակութաքաղաքակրթական արժեհամակարգը, ավանդույթները, կրոնադավանական միջավայրը, ազգի մտահայեցողությունը, պատմական զարգացման առանձնահատկությունները, հանրային ու ազգային շահերը և այլն: Դա է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

առաջին՝ արդիականացման մասնակիցների միջև նպատակների ու քաղաքական գործողությունների քննարկումների անբավարարությունը,

երկրորդ՝ քաղաքացիական վերահսկողության համակարգի անբավարար զարգացածությունը,

երրորդ՝ հաստատութենական կարգի ու քաղաքական դերերի՝ որոշակի չափով համատեղվածությունն ու եզրահանված փոխակերպումը,

չորրորդ՝ քաղաքական արդիականացման մասնակիցների շրջանում առկա «սպասումների հիասթափությունը»,

հինգերորդ՝ քաղաքական արդիականացման հիմքում դրված ակտիվ քաղաքական ոճը՝ կազմված հասարակությանը պարտադրված նորանուծություններից,

վեցերորդ՝ քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, ինքնություն, օրինականություն) ձգնաժամերի հաղթահարման ձգձգումը, ինչի հետևանքով հակընտրանին հանդես է գալիս ոչ թե որպես քաղաքական ընդդիմախոս, այլ հակամարտային շարժում: Այդ պատճառով կառավարող ընտրանու և հակընտրանու միջև բանավեճը ծավալվում է ոչ թե ռացիոնալ, այլ զգացմունքային և խորհրդանշական հիմունքով:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացումը տարանջատական մշակույթի ազդեցության հետևանքով բազմաթիվ խոչընդոտների է բախվել ոչ միայն քաղաքական

23 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, էջ 7-8:

մասնակցության մակարդակի աճի, այլև սոցիալ-պատմական տեքստի համակարգային զարգացման անհրաժեշտության բերումով:

3. Էթնիկ լոբբինգի ինստիտուտը և քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում

Արձանագրելով արդիականացման արդյունավետության համար էթնոմշակութային առանձնահատկությունների առաջնայնությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքական արդիականացման գործում փորձենք դիտարկել հայկական սփյուռքի դերակատարության հարցը՝ ի դեմս դրա քաղաքական գործունեության հիմնական արտահայտչաձևի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի:

Սփյուռքյան համայնքները, որպես այդպիսին, ենթակա չեն միասնական գիտական բնորոշման, առավել ևս դասակարգման: Քաղաքական գիտության մեջ կան սփյուռքներին վերաբերող տասնյակ բնորոշիչներ, որոնք, որպես կանոն, իրար ոչ թե հակասում, այլ փոխլրացնում են: Թեև գիտնականների կողմից երբեմն փորձ է արվում դասակարգելու սփյուռքի սահմանումները²⁴, այնուամենայնիվ, այդպիսի փորձերը շնորհակալ գործ չեն, քանի որ սփյուռքներն ուսումնասիրող մի շարք խոշոր մասնագետներ, օրինակ՝ Գ. Շեֆֆերը, տարիների ընթացքում լրացնում են սփյուռքների բնորոշիչների ու սահմանումների սեփական առաջարկները:

Սույն աշխատանքում մեր առջև դրված խնդիրը լուծելու համար առանձնացնենք սփյուռքի վերաբերյալ քաղաքական գիտության մեջ առկա և այն բնութագրիչները, որոնք պայմանավորում են նրա քաղաքական գործունեության շերտերը:

Այսպես՝ Վ. Սաֆրանը, ի թիվս այլոց, սփյուռքի բնութագրիչներ է համարում հայրենիքի վերաբերյալ հավաքական հիշողության և պայմանների բարելավման դեպքում հայրենիք վերադարձի հանձնառության պահպանումը, հայրենիքի վերականգնմանն ու պահպանմանը, անվտանգությանն ու բարգավաճմանը հավաքական նվիրումը, հայրենիքի հետ անմիջական կամ միջնորդավորված շարունակական կապի պահպանումը²⁵:

Գ. Շեֆֆերը սփյուռքին վերաբերող իր բնութագրիչների մեջ առաջարկում է նշել նաև սփյուռքի հավաքական ինքնության պահպանման և զարգացման, հայրենիքի և ընդունող երկրի ինստիտուցիոնալ միավորներից

24 Տե՛ս *Ложкарёв И. Д.*, Эволюция понятия «диаспора» в политической науке, «Этносоциум и межнациональная культура», М., 2017, N 4 (106), էջ 70-78:

25 Տե՛ս *Safran W.*, *Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return*, *Diaspora: A Journal of Transnational Studies*, No. 1, Toronto, 1991, էջ 83-99:

զատ ներքին կազմակերպվածության առկայության, ինչպես նաև հայրենիքի հետ իրական և նշանակալի փոխհարաբերությունների պահպանման գործառնությունները:

Եթե նկատի ենք ունենում Ռ. Կոհենի այն դիտարկումը, որ «Սփյուռքը ոչ միայն հավաքական ինքնություն է ձևավորում, այլև ունի ընդհանուր ինքնություն այլ երկրներում ապրող նույնաէթնիկ խմբերի հետ»²⁶, ակնհայտ է դառնում, որ, ի դեմս սփյուռքի, գործ ունենք քաղաքական գործընթացի ցանցային դերակատարի հետ, որի կողմից արդի տեղեկատվահաղորդակցական միջոցների կիրառումն ու հետարդյունաբերական հեղափոխության արդյունքների յուրացումը, դրանց մշակումն ու տեղայնացումը կարող են առավել դյուրությամբ կատարվել:

Յոսի Շեյնը սփյուռքը սահմանում է որպես ընդհանուր ծագում ունեցող ժողովուրդ, որը բնակվում է իր կողմից ընկալվող հայրենիքից դուրս՝ լինելով անկախ կամ ոչ: Սփյուռքներն իրենց համարում են կամ այլոց կողմից դիտարկվում են որպես իրենց հայրենիքի ազգային համայնքի անդամներ կամ պոտենցիալ անդամներ, ինչը պահպանվում է անկախ իրենց քաղաքացիական պատկանելությունից²⁷: Մեկ այլ աշխատանքում Շեյնը նկատում է. «Այսօր, նույնիսկ գլոբալիզացիայի և մշակույթի համատարած հոմոգենացման դարաշրջանում, մարդիկ շարունակում են հուզականորեն և քաղաքականապես նվիրված մնալ իրենց ազգակիցների համայնքային կյանքին ու կացությանը: Ապակենտրոն հայրենիքի հանդեպ Սփյուռքի կապը մնում է միջազգային հարաբերությունների առանցքային ուժերից մեկը: Այն սովորաբար արտահայտվում է բացահայտ, հիմնականում ժամանակակից լիբերալ պետություններում, որոնցում հավատարմությունը և՛ ծագման, և՛ ընդունող երկրի նկատմամբ հաջողությամբ համատեղվում է»²⁸: Սփյուռքների անվանի հետազոտողն առանձնացնում է սփյուռքների քաղաքական գործունեության հետևյալ հարթությունները, որոնք, ըստ նրա, միջազգային հարաբերությունների գործոններ են. 1) ազգային ինքնության գաղափարի ձևակերպում և հստակեցում, 2) պետությունից դուրս գտնվող ազգակից շրջանակների ուշադրության բևեռում ազգային ինքնությանը վերաբերող հարցերին, 3) ֆինանսական հոսքերով ինքնության տարբեր քաղադրիչների վրա սփյուռքի ազդեցության ընդլայնում, 4) ֆինանսական հոսքերի փոխանցման կառուցվածքային ուղիների հստակեցում²⁹:

Սփյուռքյան համայնքները նույնականացվում են որպես հայրենիքի մի մաս: Այն գաղափարը, որ հայրենիքն ու սփյուռքը մեկ ժողովուրդ են կազ-

26 Cohen R., *Global Diasporas: An Introduction*. Second edition, Routledge, 2008, p. 7.

27 Shi Y., *The Frontier of Loyalty: Political exiles in the age of the Nation-state*. Middletown, CT: Wesleyan University press, 1989; 2nd ed., Ann Arbor: University of Michigan Press, 2005, էջ 51:

28 Shain Y., *Kinship and diasporas in international affairs*, Michigan, 2007, p. 32.

29 Shi Y. նույն տեղում, էջ 33:

մում, հատկապես ուժեղ է արտահայտված նորանկախ պետությունների պարագայում³⁰:

Սփյուռքյան քաղաքական կառույցները հաճախ ազդեցություն են ունենում նաև հայրենի պետության քաղաքացիական հասարակության և քաղաքական համակարգի կայացման գործում, երբ պետության գոյությունը դառնում է ավելի անվտանգ:

Վերը հիշատակված դեպքերը, ըստ էության, քաղաքական գիտության մեջ շոշափում են էթնիկ լոբբինգի ինստիտուտը, որը սփյուռքի կողմից քաղաքական գործունեության, հայրենիքի հետ հարաբերությունների պահպանման, վերջինիս շահերի պաշտպանության հիմնական արտահայտչաձևն է:

Քաղաքական գիտության մեջ լոբբինգի՝ որպես քաղաքական գործընթացի առանձին ինստիտուտի վերաբերյալ հետազոտությունները սկսվեցին դեռևս նախորդ դարի վերջին քառորդից: Հետազոտողներից Թ. Լայնը և Զ. Մաքսվելը, ըստ գործունեության ուղղվածության, լոբբիստական կազմակերպությունները տարանջատում են հետևյալ կերպ՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, տարածաշրջանային, օտարերկրյա (էթնիկ) և հատուկ³¹:

Լոբբինգի վերաբերյալ գիտական առաջնային ուսումնասիրություններ են կատարել Կ. Բեյմեն, Լ. Միլբրաֆը, ավելի ուշ շարունակեցին Վ. Շենդելենը, Պ. Կոպլը և ուրիշներ:

Ըստ Կ. Բեյմեի՝ լոբբինգ նշանակում է «քաղաքական և բյուրոկրատական հնարավորություններում սոցիալական խմբերի, պալատական շրջանակների և ընկերությունների բազմազան բուռն գործունեություն»³²: Լ. Միլբրաֆը դեռևս 1960 թ. սահմանեց. «Հաղորդակցությունը միակ միջոցն է՝ ազդելու կամ փոխելու ընկալումը: Լոբբինգը, հետևաբար, ամբողջությամբ հաղորդակցական գործընթաց է»³³: Ըստ Վ. Շենդելենի՝ «Լոբբինգը նվազագույնը հանրային իշխանությունների հետ տեղեկատվության ոչ պաշտոնական փոխանակումն է՝ մի կողմից, մյուս կողմից՝ առավելագույնը՝ ոչ պաշտոնական փորձ՝ ազդելու պետական իշխանությունների վրա»³⁴:

Ավելի ուշ Պ. Կոպլն առաջարկեց առավել ընդգրկուն մի սահմանում. «Լոբբինգը շահագրգիռ ներկայացուցիչների միջոցով պետական մարմինների օրենսդրական-վարչական որոշումների վրա ազդելու փորձն է կամ հաջող ազդեցությունը: Ազդեցությունը նախատեսում և ենթադրում է հա-

30 Տե՛ս նույն տեղում, էջ 103:

31 Տե՛ս Lyon T., Maxwell J., Astroturf: Interest group Lobbying and Corporate Strategy. Journal of Economics & Management Strategy, Volume 13, Number 4, Boston, 2004:

32 Մեջբերումը ըստ Charrad K., Lobbying the European Union, Munster, 2009, էջ 2-3:

33 Տե՛ս Milbrath L. W., Lobbying as a Communication Process, Public Opinion Quarterly 24(1), էջ 32-53:

34 Charrad K., op. cit., p. 2-3.

դորդակցության նպատակային օգտագործում օրենսդիր կամ գործադիր մարմինների նկատմամբ»³⁵:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ լոբբինգի կամ էթնիկ լոբբինգի հայտնի գիտական սահմանումներում շեշտը միակողմանիորեն դրվում է էթնիկ լոբբինգի ինստիտուտի գործունեության այն ոլորտի վրա, որը ենթադրում է **ազգային, կրոնական, մշակութային համախմբմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ճնշում գործադրել, քաղաքական նպատակներ դնել և դրանց հասնել հյուրընկալող երկրի պետական իշխանության թևերի, տարածքային և տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների միջոցով՝ ի շահ հայրենի պետության**: Այլ խոսքով, վերոհիշյալ սահմանումները էթնիկ լոբբինգի ինստիտուտի վրա պրոյեկտելով, հասկացվում է, որ դրանք գլխավորապես վերաբերում են էթնիկ լոբբինգի գործունեությանը հյուրընկալ երկրում: Ըստ էության, աչքաթող է արվում էթնիկ լոբբինգի գործունեության երկրորդային շերտը, որն այդ ինստիտուտի զարգացման որոշակի մակարդակում կարող է հայրենի պետության քաղաքական արդիականացման գործում ձեռք բերել ինքնուրույն դերակատարություն:

Սփյուռքի ժամանակակից հետազոտողներից թերևս Յոսի Շեյնն է, որ, հղում անելով այլ գիտնականների, մասնավորապես՝ Թոնի Սմիթին, Մայրոն Ուայնտերին և Մոզես Նայմին, անդրադառնում է էթնիկ լոբբիստական կառույցների առավել խորքային գործունեությանը՝ գրելով. «Սփյուռքն ընդունող երկրում գործում է որպես էթնիկ լոբբի, իբրև բազմամշակութային արտաքին քաղաքականության ջատագով: Նրանք քարոզչություն են իրականացնում ավտորիտար հայրենիքի վարչակարգերը ժողովրդավարացնելու համար և համաշխարհային տնտեսության մեջ հանդես են գալիս որպես իրենց հայրենիքների տնտեսություններին աջակցող ուժ: Ընդհանրապես սփյուռքներն ավելի ու ավելի են ընդունակ խթանելու անդրազգային կապերը, կամուրջ հանդիսանալու կամ միջնորդ լինելու իրենց հայրենիքների և ընդունող հասարակությունների, ներքին և արտաքին քաղաքականությունների միջև, փոխանցելու բազմակարծության և ժողովրդավարության արժեքները, ինչպես նաև ձեռնարկատիրական ոգին և հմտությունները, որոնց կարիքն իրենց հայրենի երկրներն այդքան ունեն»³⁶:

Վերոգրյալից կարող ենք հանրագումարել, որ **սփյուռքը քաղաքական գործընթացի ուրույն դերակատար է՝ շահերի և հետաքրքրությունների հստակ տարաբաժանմամբ**: Ինչ վերաբերում է հայկական

35 Koepl P., The acceptance, relevance and dominance of lobbying the EU Commission-A first time survey of the EU Commission's civil servants. Journal of Public Affairs, vol. 1, N 1, p. 69-80.

36 Shain Y., Kinship and diasporas in international affairs, 2007, p. 128.

սփյուռքին, ապա էթնիկ լոբբիստական կազմակերպությունները նրա քաղաքական գործունեության անքակտելի մասն են կազմում:

Հայկական սփյուռքի լոբբիստական կազմակերպությունների դասակարգման վերաբերյալ միանշանակորեն ընդունված գնահատական չկա: Խնդիրն այն է, որ տարբեր երկրների ներքին իրավաօրենսդրական կարգավորումները և քաղաքական մշակույթը յուրահատուկ պայմաններ են ստեղծում լոբբիստական խմբերի գործունեության համար, հաճախ էլ տարածաշրջանից տարածաշրջան խիստ տարբեր է քաղաքական մշակույթում լոբբինգի ինստիտուտի ընկալման մակարդակը:

Ընդհանուր առմամբ հայկական սփյուռքում ուղղակի լոբբիստական կազմակերպությունների թիվը փոքր է: Ասվածը վերաբերում է այնպիսի կազմակերպություններին, որոնց նպատակն է պաշտպանել հայկական շրջանակների և Հայաստանի Հանրապետության շահերը՝ տվյալ երկրի իրավաօրենսդրական հնարավորությունների շրջանակներում օգտագործելով էթնիկ լոբբինգի ինստիտուտին վերաբերող կոնկրետ գործիքակազմ:

Հաշվի առնելով հայկական սփյուռքի համայնքային կազմակերպությունների մեծաթիվ և դրան զուգահեռ՝ ուղղակի լոբբիստական կազմակերպությունների փոքրաթիվ լինելը՝ մեր կողմից առաջարկվել է հայկական սփյուռքի կազմակերպությունները, որոնց գործունեությունը պայմանավորված է հայրենիքի շահերի սպասարկմամբ, դիտարկել երկու հարթություններում՝ **լոբբիստական և մերձլոբբիստական**³⁷:

Սույն առաջարկն արվել է նաև այն պատճառով, որ **հայկական սփյուռքի տարաբնույթ կազմակերպությունների ցանցային դրսևորման պայմաններում դրանց մի մասը ծավալում է ուղղակի՝ դասական լոբբիստական գործունեություն, իսկ մյուս՝ առավել մեծ մասը իր առօրյա գործունեությամբ ենթադրում է էթնիկ լոբբինգի ինստիտուտին առնչվող գործառնության և տեխնոլոգիական շերտեր, սակայն իրենց բնույթով, կանոնադրական նպատակներով ու առաքելությամբ դրանք լոբբիստական կազմակերպություններ չեն:**

Մերձլոբբիստական կազմակերպություններ կարող են դիտվել տեղական համայնքային կազմակերպությունները, քաղաքական կազմակերպությունների մի մասը, ինչպես նաև եկեղեցական, բարեգործական, մշակութային, կրթական, լրատվական, մարմնակրթական, մասնագիտական ընկերակցությունները և այլ կազմակերպություններ:

Հայկական սփյուռքի լոբբիստական կազմակերպությունները, որպես կանոն, կրում են ընդունող երկրի քաղաքական մշակույթի ազդեցությունը՝ գործելով այդ երկրների իրավաօրենսդրական կարգավորումների և լոբ-

37 Տե՛ս **Ղուկասյան Գ.**, նշվ. աշխ., էջ 242-247:

բինգի վերաբերյալ հասարակաքաղաքական ընկալումների շրջանակներում:

Հայկական լոբբինգն առանձնահատուկ դեր ունի տարբեր երկրներում հայության քաղաքական դերի բարձրացման, միջազգային կազմակերպություններում և առանձին պետություններում հայության շահերի առաջնորդման գործում: Հայկական էթնիկ լոբբինգի գործունեության առաջնահերթությունները հիմնականում երեքն են՝ **Ղարաբաղյան հիմնախնդիր, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, դատապարտում և հատուցում, Հայաստանի տնտեսական զարգացմանն օժանդակություն:**

Հայկական սփյուռքի էթնիկ լոբբինգի ինստիտուտը տարածվում է Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Ավստրալիայում և լայնորեն օգտվում է լոբբիստական գործունեության վերը հիշատակված բաղադրիչներից ու տեխնոլոգիաներից: Ուղղակի լոբբիստական գործունեության համար նպաստավոր պայմաններ են առկա Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում, Եվրոպական միության երկրներում, Ավստրալիայում, Արգենտինայում և այլուր, և պատահական չէ, որ հենց այդ երկրներում գործող հայ համայնքներն են քաղաքականապես ամենաազդեցիկը:

Հայկական էթնիկ լոբբինգի ինստիտուտի ծանրակշիռ դերակատարը ՀՅԴ-ի կողմից դեռևս 1944 թ. հիմնադրված և ՀՅԴ Բյուրոյի համակարգմամբ գործող Հայ Դատի համաշխարհային ցանցն է, որը գործում է Հայ Դատի հանձնախմբերի և գրասենյակների միջոցով: Քաղաքական ակտիվություն են ցուցաբերում նաև Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը, Ամերիկայի հայկական համագումարը և այլն:

Կարծում ենք, որ Հայաստանի զարգացմանն օժանդակելու՝ հայկական էթնիկ լոբբինգի քաղաքական առաջնահերթությունը պետք է վերածնակերպել որպես Հայաստանի բնականոն արդիականացմանը նպաստում: Բանն այն է, որ քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ենթադրում է ոչ միայն արժեքների բնականոն արդիականացում՝ համաձայն արևմտյան ձևաչափի, այլև սոցիալ-մշակութային և էթնոմշակութային արժեքների զուգամիտում: Հետևաբար Սփյուռքը Հայաստանի հետ իր հարաբերությունները պետք է կառուցի՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքական արդիականացման մարտահրավերները, իսկ Հայաստանն իր հերթին պետք է հաշվի առնի Սփյուռքի բազմամշակութային բնույթը, նրա ընձեռած հնարավորություններն ու մարտահրավերները:

Հայաստանի Հանրապետության քաղաքական արդիականացման գործում հայկական էթնիկ լոբբինգի հնարավորությունների ներդրման խնդիր-

րը դիտարկենք քաղաքական արդիականացման տիպաբանության առկա բնորոշների, ինչպես նաև մարտահրավերների շրջագծում:

Եթե առաջնորդվենք արդիականացման տիպաբանության վազող (շիթային) և երկրորդական (արտացոլված) մոդելներով, ապա էթնիկ լոբբինգի ինստիտուտը կարող է դիտարկվել երկու պարագայում էլ: Մասնավորապես, եթե վազող արդիականացման համար առանձնացնում ենք ներքին ռեսուրսների օգտագործման առաջնությունը, իսկ երկրորդային արդիականացումը բնորոշվում է ժամանակակից պայմանների ստեղծմամբ (տեխնոլոգիաների ներդրում, մարդկային ռեսուրսներ, արտաքին փոխառություններ), ապա էթնիկ լոբբինգի ինստիտուտը երկու դեպքում էլ կարող է ունենալ քաղաքական կոնկրետ դերակատարություն: Վազող արդիականացման դեպքում էթնիկ համայնքներում բնակվողները, խոշոր հաշվով, թեև չեն գտնվում հայրենի երկրի իրավազորության տիրույթում, այնուամենայնիվ, համազգային ներուժի մաս են: Երկրորդային արդիականացման պարագայում էթնիկ համայնքներում բնակվողները կարող են հանդես գալ որպես հայրենի երկրի արդիականացման գործում մարդկային ռեսուրսների, արտաքին ներդրումների ու փոխառությունների և դրանց՝ ազգային մակարդակում տեղայնացման երաշխավորներ:

Էթնիկ լոբբինգի ինստիտուտի ազդեցությունը հնարավոր է դիտարկել նաև քաղաքական արդիականացման եռամաս (ներծին, արտածին և ներծին-արտածին) մոդելի շրջանակներում: Այսպես՝ մի կողմից էթնիկ լոբբինգի ռեսուրսը կարող է դիտվել որպես սեփական ռեսուրս, մյուս կողմից՝ որպես փոխառություն բերող, և վերջապես, որն ամենաարդյունավետը կարող է լինել, այն կարող է զուգամիտել ազգի սեփական ռեսուրսն արտաքին փոխառության հետ:

Այսպիսով՝ հանրագումարենք, որ էթնիկ լոբբինգի ինստիտուտը և քաղաքական արդիականացումն ունեն տեսամեթոդաբանական ընդգծված համատեղումներ:

Ինչ վերաբերում է հայկական սփյուռքի էթնիկ լոբբինգին, ապա այն կարող է գործուն դերակատարություն ստանձնել քաղաքական արդիականացմանը բնականոն ձևով և ազգային յուրահատուկ մոտեցմամբ արձագանքելու համար: Ի մասնավորի հայկական սփյուռքն ի գորու է՝

- կոնվերգենցիայի ենթարկելու ազգային և ունիվերսալ ազգային համակարգերը,
- բնականոն ճանապարհով արդիականացնելու քաղաքական և քաղաքակրթական ինքնությունները,
- տնտեսական կապիտալն օրինականացնելու և ժողովրդականացնելու նպատակով այն դուրս բերելու քաղաքական վերահսկողությունից, ինչը համագործակցության մշակույթի զարգացման շնորհիվ

կնպաստի տնտեսության ազատ մրցակցային դաշտի արդյունավետ գործառնանք,

- ստեղծելու անցումային հասարակություններին բնորոշ քաղաքականության և ժողովրդավարական համախմբումը խթանող զարգացման մոդելներ,
- նպաստելու ազգ-պետություն ցանցային գործունեության կազմակերպական ձևի գործարկմանը,
- խթանելու զանգվածային շարժունակությունն ու ազգային մասնակցայնությունը,
- մարդկանց ինքնահաստատման, ինքնադրսևորման ճանապարհով ձևավորելու բաց սոցիալական կառուցվածք,
- նպաստելու քաղաքական և քաղաքացիական հաստատությունների միջև բաց քաղաքական մրցակցություն ապահովող երկխոսության ծավալմանը,
- նպաստելու տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգի ներդրմանը:

Հայաստանի առջև ծառայել է պատմական խնդիր՝ հղկելու քաղաքական արդիականացման «քառանկյուն անիվի» եզրագծերը և անցում կատարելու բնականոն զարգացման: Զարգացման տվյալ բնորոշ ակնհայտորեն չի լինի ամբողջությամբ ո՛չ արևմտյան՝ ազատական, ո՛չ արևելյան՝ մեկուսախմբային-տարանջատական: Այն, լինելով **հայկական՝ սինթետիկ**, հնարավորություն կտա բնականոն կերպով արդիականացնելու կառավարումը և հայկական մշակույթին բնորոշ ոգեղենության, արարչականության, կենսասիրության և հանրային համախմբման զարգացմամբ ապահովելու ազգային անվտանգությունը³⁸:

Այսպիսով՝ **հայկական էթնիկ լոբբինգը կարող է էական քաղաքական դերակատարություն ստանձնել ՀՀ արդիականացման գործում՝ արդի միջազգային հարաբերությունների փորձի, տեխնոլոգիաների, գործընթացների յուրացման, հայկական էթնոմշակութային և սոցիալական ֆենոմեններին համապատասխանեցման և հայրենիքսփյուռք-ընդունող պետություն եռամաս շղթայի գործարկման պայմաններում դրանց՝ Հայաստանում տեղայնացման միջոցով:**

Մարիամ Մ. Մարգարյան – հեղինակ է 8 մենագրության և ավելի քան 110 գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել հանրապետական և միջազգային գիտական հեղինակավոր հանդեսներում: Զբաղվում է քա-

38 Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը, որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, «Հայկական բանակ», 2017, N 4 (94), էջ 21-32:

ղաքական արդիականացման տեսության արդի դրսևորումների շրջանակներում կառավարող էլիտայի, լիդերության կայացման հիմնախնդիրների, ինչպես նաև հետխորհրդային երկրներում «ժողովրդավարական անցումից համախմբում» գործընթացի քաղաքակրթական բազմաչափության ուսումնասիրությամբ:

Էլ. հասցե՝ mariam.margaryan@paara.am

Գևորգ Մ. Ղուկասյան – հեղինակ է 5 գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է միջազգային հարաբերությունների ոլորտը, ներեվրոպական քաղաքական զարգացումները, լոբբինգի ինստիտուտը, մասնավորապես՝ էթնիկ լոբբինգը, արդի սփյուռքների փոխակերպումները և դրանց ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա, Սփյուռքի դերը ՀՀ քաղաքական արդիականացման գործում, «փափուկ ուժի» քաղաքականությունը, Եվրոպայի հայկական լոբբիի դերը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում, Ղարաբաղյան հիմնախնդրի ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության վրա, պետությունների քաղաքական արդիականացման գործընթացները և այլն:

Էլ. հասցե՝ gmghukasyan@outlook.com

Summary

THE INSTITUTE OF ETHNIC LOBBYING

As a player in the political development and modernization of the
Republic of Armenia

Mariam M. Margaryan

Doctor of Sciences in Politology

Gevorg M. Ghukasyan

Key words – Political modernization, political development, natural modernization, ethnic lobbying, diaspora, the crisis of political development.

The results of the democratic transition in the post-Soviet space clearly show that vectorism (linear liberalization) led to crises of political development.

Due to the neglect of ethno-cultural peculiarities in the political process, almost all countries have faced crises of political development. The existence of such crises is explained by the fact that in the process of political modernization the measure of civilization has not been used as a basis for strategic management.

The civilizational dimension of political modernization makes it possible to consider the strategic management as a key mechanism for renouncing mechanical Westernization and implementing modernization based on its own civilizational identity.

As a result, there was a disappointment of expectations in the post-Soviet countries, which pushed citizens to alienate themselves from their own state, to replenish or to create their own ethnic communities in different countries. In case of continuous increase of the political role of the Diasporas, the citizens alienated from their own state have the opportunity to rediscover their own identity and to defend it in the current era of multiculturalism.

Summarizing the revolutionary changes taking place in the post-Soviet countries, it can be stated that overcoming the crises of political development presupposes a system of theoretical approaches and practical experience, which will allow completing the cultural, social-psychological institutional peculiarities when analyzing the political development and modernization in the Republic of Armenia. In this context, this article proposes to assess the impact of other actors in the political process on political modernization, in particular the institution of ethnic lobbying.

ИНСТИТУТ ЭТНИЧЕСКОГО ЛОББИРОВАНИЯ
Как участник политического развития и модернизации
Республики Армения

Мариам М. Маргарян
Доктор полит. наук

Геворг М. Гукасян

Ключевые слова - политическая модернизация, политическое развитие, естественная модернизация, этническое лоббирование, диаспора, кризис политического развития.

Результаты перехода к демократическому правлению на постсоветском пространстве ясно показывают, что векторизм (линейная либерализация) привела к кризисам политического развития.

Из-за игнорирования этнокультурных особенностей практически все страны столкнулись с кризисами политического развития. Существование подобных кризисов объясняется тем, что в процессе политической модернизации в качестве основы при стратегическом управлении не использовалось цивилизационное измерение.

Цивилизационное измерение политической модернизации позволяет рассматривать стратегическое управление как ключевой механизм для отказа от механической вестернизации и осуществления модернизации, основанной на собственной цивилизационной идентичности.

В результате политических процессов в постсоветских странах наблюдается разочарование граждан, что подталкивает их к отчуждению от собственного государства, к пополнению или созданию этнических сообществ в других странах. В случае постоянного повышения политической роли диаспоры отчужденные от собственного государства граждане имеют возможность вновь осознать свою идентичность и защитить ее в нынешнюю эпоху мультикультурализма.

Обобщая результаты революционных изменений, произошедших в странах постсоветского пространства, можно констатировать, что для преодоления кризиса политического развития необходима новая система

теоретических подходов и ознакомление с практическим опытом других стран, которые позволяют уточнить культурные, социально-психологические институциональные особенности при анализе политического развития и модернизации РА. В этом контексте в данной статье предлагается оценить влияние всех участников политического процесса, в частности института этнического лоббирования на политическую модернизацию.

REFERENCES

1. **Ejzenshtadt Sh.**, Revoljucija I preobrazovanije obsh'estv. Sravnitel'noje izuchenije civilizacij, Per. s. angl. A.V. Gordona, pod red. B.S. Jerasova, M.: Aspekt Press, 1999 (**In Russian**).
2. **Ghukasyan G.**, Arevmtyan Yevropayi haykakan sp'yurk'i lobbistakan gortsuneut'yan shurj, "Patmut'yun yev mshakuyt'", Yer., 2020, N 1 (**In Armenian**).
3. Istorija modernizacii kak predmet social'no-filosofskogo analiza / otv. red. **V.G. Fedotova, V. A. Kolpakov**, M.: IFRAN, 2014 (**In Russian**).
4. **Loshkarjev I. D.**, Evoljucija ponjatija "diaspora" v politicheskoy nauke, "Etnosocium I mezhnacional'naja kul'tura". 2017, № 4 (106) (**In Russian**).
5. **Margaryan M.**, K'aghak'akan ardiakanats'man hramayakannerë Hayastani Hanrapetut'yunum, Yer., 2019 (**In Armenian**).
6. **Margaryan M.**, K'aghak'akan ardiakanats'man yev zargats'man himnaharts'er, Yer., 2004 (**In Armenian**).
7. **Margaryan M.**, K'aghak'akrt'akan ardiakanats'man k'aghak'akrt'akan ch'ap'umë vorpes razmavarakan karavarman apahovman himk', "Haykakan banak" razmagitakan handes, 2017, N 4 (94) (**In Armenian**).
8. **Margaryan M.**, Zhoghovrdavarats'man yerrord alik'. Ants'umayin hasarakut'yunneri gtsayin zargats'man bnuytë, "Lraber" hasarakakan gitut'yunneri, Yer., 2005, N 2 (**In Armenian**).
9. **Meleshkina Ye.**, Politicheskij process, M., 2001 (**In Russian**).
10. **Xantington S.**, Stolknovenije civilizacij / Per. s. angl. T. Velimejeva, Ju. Novikova, M., 2000 (**In Russian**).